ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 09 >> Մարտի 2021թ. N ԱՊ/74-2021

Ո Ր Ո Շ Ու Մ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2021 թվականի աշխատանքային ծրագիրը մարզի տարածքում գործող <<Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի և երեք ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը համակարգելու, ոռոգման ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքը և համակարգի արդյունավետ շահագործումը կարգավորելու նպատակով

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

1. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՛ խմբի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ոռոգում - Ջրառ>>փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնաճյուղերի մասնագետներին, ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին / համաձայնությամբ/:
2. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՛ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 30-օրյա ժամկետում և արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/ ստուգայցերի և ուսումնասիրությունների ժամանակ թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում հարցը քննարկել ջրօգտագործողների ընկերությունների վարչական խորհրդի նիստում, ձեռնարկել գործնական միջոցներ հարցի կարգավորման ուղղությամբ:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28 06 46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ՝ Ա. Համբարձումյանին աշխատանքներն իրականացնելու նպատակով սահմանված կարգով աշխատանքային խմբին տրամադրել հերթապահ ավտոմեքենա:

5. .Սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ պարոն Ա. Մեխակյանին
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից

Մարզպետ՝ **Հ. Մաթևոսյան**

09.03.2021

X

VERIFIED OCSP 09-03-2021 15:42:07 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809520210

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2021 թվականի Նոյեմբ. 09-ի
417/Կ-2021 որոշման

ԽՈՒՄԲ

Խմբի ղեկավար՝
Ա. Այվազյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Անդամներ՝
Գ.Մելիքյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի պետ

Կ. Մարգարյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի ավագ մասնագետ

Մ.Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, գյուղատնտեսության բաժնի պետ

Ս.Մխիթարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

09.03.2021

VERIFIED OCSP 09.03.2021 14:39:49 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 38126410023